

**ԿՆՈՋ ԱԶՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՂԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ  
«ՈՐՈՂԱՅԹ ՓԱՈՒՏ»-ՈՒՄ**

**Գ. Ա. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ**

Մարդու իրավունքների հիմնահարցի շրջանակներում հնդկահայ լուսավորիչների աշխարհայացքի տրամաբանական բաղադրամասն են կազմում կնոջ հասարակական կարգավիճակի, նրա ազատությունների, իրավունքների ու պարտականությունների մասին պատկերացումները: Պատմականորեն կինը հասարակական կյանքում և ամուսնաընտանեկան հարաբերություններում ունեցել է տղամարդուց ցածր կարգավիճակ: Ճիշտ է, հնում հայ և օտարազգի հեղինակները տարբեր առիթներով գովերգել են կնոջը, նրան ներկայացրել տղամարդուն հավասար հայրենիքի պաշտպան, պետական գործիչ, ընտանիք պահող հիմնասյուն և այլն<sup>1</sup>: Խնդրո առարկա հարցի առնչությամբ բերելով Գրիգոր Նարեկացու՝ Երգ երգոցի մեկնության հետևյալ միտքը, թե «Դստերք Երուսաղեմի՝ արդարոցն ասէ, մաև հրեշտակացն ևս դստերս սովոր է կոչել. որ բազում անգամ կայ ի գիրս մարգարեականաց. զի գհամեստութիւն ունին որպէս զկանայս. վասն զի պատկառելի է կանանց ազգ առաւել քան զարանց» (ընդգծ.՝ Հ. Մ.), Հ. Միրզոյանը նկատում է, որ Նարեկացին, խտրականություն չդնելով կնոջ և տղամարդու միջև, առանձին դեպքերում անհամեմատ դրականորեն է արտահայտվում կնոջ մասին, ինչն իր ապրած ժամանակի համար ինքնին առաջադիմական էր: «Վստահ եմ,- գրում է նա,- որ ողջ համաշխարհային գրականության մեջ եթե դժվար է կնոջ և տղամարդու հավասարության մասին հստակ ասված դատողություն գտնել, ապա գրեթե անհնար է կնոջ առավելությունը փաստող միտք տեսնել»<sup>2</sup>: Հայ իրականության մեջ այս կարգի առաջադիմական մտքերի օրինակներ շատ կարելի է հանդիպել: Սակայն իրական կյանքում կինը ստորադասվել է տղամարդուց, սահմանափակվել են նրա իրավունքներն ու ազատությունները, հասարակական գործունեության շրջանակները: Միայն միջնադարյան աշխարհայացքային կապանքներից ազատագրվելուց հետո հնարավոր դարձավ շահագրգիռ հետաքրքրություն ցուցաբերել կնոջ հիմնախնդիրների նկատմամբ: Հայ փիլիսոփայական միտքը հատկապես լուսավորական գաղափարների ներթափանցումից հետո նոր վերաբերմունք է ձևավորում մաս կնոջ հիմնախնդիրների նկատմամբ՝ կապված նոր մտածողության և տնտեսական ու քաղաքական նոր իրողությունների հետ: «Այն,- ինչպես նկատում է Ս. Սարգսյանը,- հայ էթնոպատմամշակութային համակարգում վերածվում է մաև որոշակի ազգային գերխնդրի, կապվում է ազգային կյանքի հրատապ

<sup>1</sup> Տե՛ս Հ. Ա. Միրզոյան, Գրիգոր Նարեկացու գրական ժառանգության հարցի շուրջ, ԲԵՀ, 2004, թիվ 1, էջ 77:

<sup>2</sup> Նույն տեղում:

հարցերի լուծման հետ՝ նկատի առնելով այն կարևոր դերը, որ հայուհին ունեցել է հայոց պատմության մեջ, հայի ու ազգայինի պահպանման գործում»<sup>3</sup>: Հնդկահայ լուսավորիչները ոչ միայն քայլեր են ձեռնարկում տեսականորեն հիմնավորելու կնոջ ազատության, միջնադարյան պայմանակա-նություններից հրաժարվելու, նրա կրթության ու լուսավորության հարցերը կազմակերպելու ուղղությամբ, այլև սահմանադրությամբ ամրագրում են նրա ազատություններն ու իրավունքները: Հնդկահայ լուսավորիչների կողմից նախ հստակեցվում է «մարդու իրավունքներ» հասկացության բովանդակությունը: Եթե միջնադարյան կրոնական գաղափարախոսության գերակայության պայմաններում աստվածային (բնական) իրավունքի սուբյեկտը գերազանցապես տղամարդն էր, ապա նոր մտածողության կրողները՝ Ե. Շահամիրյանը, Մ. Բաղրամյանը, Հ. Էմինը, իրավունքի սուբյեկտ են դարձնում նաև կնոջը: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ «Ռրոզայթ փառաց»-ը ոչ միայն առանձնահատուկ տեղ է տալիս կնոջ իրավունքների ու ազատությունների ընդլայնմանը, այլև, որ ավելի կարևոր է, դրանց սահմանադրական պաշտպանությանը: Այդ հիմնախնդիրը հնդկահայ լուսավորիչների կողմից առաջին հերթին կապվում է **ամուսնաընտանեկան հարաբերությունների** սահմանադրական կարգավորման հարցերի հետ: Հայ իրականության մեջ նախորդ շրջաններում ամուսնաընտանեկան հարաբերությունները կարգավորում էր կա՛ն բացառապես եկեղեցին, կա՛ն եկեղեցական որոշակի կարգադրությունների ուղեկցությամբ, որոնք իրենց արտահայտությունն են ստացել նաև իրավունքի խնդիրներին վերաբերվող հայկական նախորդ հուշարձաններում (օրինակ, Մխիթար Գոշի Դատաստանագրքում): «Ռրոզայթ փառաց»-ը ևս չի բացառում կրոնական կարգադրությունների դերն ու նշանակությունը այդ հարաբերությունների կարգավորման ժամանակ, սակայն, միաժամանակ, դրանք չի համարում եկեղեցու բացառիկ մենաշնորհը: Եթե եկեղեցականները ցանկանում են հաստատել նոր, այդ թվում և ամուսնությանն ու ընտանիքին վերաբերվող կարգադրու-թյուններ, ապա դրանք պետք է արվեն աշխարհիկ իշխանությունների հետ համաձայնեցված, «Հայոց տան հավանությամբ»<sup>4</sup>: Սա ցույց է տալիս, որ հնդկահայ լուսավորիչները մի կողմից մեծ տեղ էին տալիս այդ կարգադրու-թյուններին, մյուս կողմից գտնում էին, որ դրանց ընդունումը պետք է համա-ձայնեցվի առաջին հերթին պետության հետ: «Ռրոզայթ փառաց»-ում սահ-մանադրական կարգավորման են ենթարկվում այնպիսի հարցեր, ինչպիսիք են ամուսնության տարիքը, ամուսնանալու համար ծնողների կամ հարա-զատների համաձայնությունը, կնոջ պաշտպանվածությունը և այլն:

Կնոջ անձնական իրավունքների տեսակետից, իրոք, խիստ կարևոր է ամուսնական տարիքի սահմանման հարցը, որը տարբեր ժողովուրդների մոտ տարբեր է՝ պայմանավորված աշխարհագրական դիրքով, բնակլի-մայական պայմաններով, կենսաքանական հասունացման առանձնա-հատկություններով, դարերով մշակված ավանդույթներով և այլն: Հաշվի

<sup>3</sup> Մ. Մարգարյան, Մարդու հիմնախնդիրը հայ փիլիսոփայական և հասարակա-կան մտքում, Եր., 2001, էջ 305-306:

<sup>4</sup> Տե՛ս Ե. Շահամիրյան, Ռրոզայթ փառաց, Եր., 2002, էջ 192: Այսուհետև սույն գրքից հղումները կտրվեն շարադրանքում, փակագծերի մեջ, միայն էջը:

առնելով այս հանգամանքը՝ հայոց առաջին սահմանադրությունն ամրագրում է, որ «Հայոց աղջիկների ամուսնության հասակը տասնչորս տարին լրանալուց հետո է, իսկ տղաներինը՝ տասնյոթ տարին լրանալուց հետո: Այդ տարիքից ավելի վաղ ժամանակն արգելված է» (էջ 145): Ամուսնության համար անհրաժեշտ է ոչ միայն ամուսնացողների, այլև երկու կողմերի հարազատների փոխհամաձայնությունը: Սահմանադրության համաձայն՝ «Յուրաքանչյուր երիտասարդ, եթե ամուսնանալու նպատակով նշանվում է աղջկա հետ, պետք է ընդունելի լինի երկու կողմի ծնողների համար: Եթե ծնող չունի, ապա [համաձայնություն պետք է տա] ընտանիքին մերձավոր որևէ մեկը» (էջ 135): Հայ իրականության մեջ որպես ամուսնության հիմնական ձև ընդունվում և խրախուսվում է մենամուսնությունը, որը ամուսնական հարաբերությունների հիմքն է: «Ով որ ամուսնացած է մեկ ամուսնությամբ, Տիրոջ շնորհին կարժանանա», - խրախուսում է սահմանադրությունը (էջ 146): Բայց եթե ստացվի այնպես, որ խաբերությամբ կամ գաղտնի կինը կամ տղամարդը ամուսնանում են երկրորդ անգամ, ապա այդ հարաբերությունները ևս կարգավորվում են օրենքով: «Որևէ տղամարդ կամ կին եթե խաբերությամբ և գաղտնի ամուսնանա երկու կնոջ հետ և կամ թե երկու տղամարդու հետ, տղամարդու հետ առաջինն ամուսնացած կինը պետք է մնանրա ամուսնության կին: Իսկ եթե երկու կանանց հետ տղամարդը երկրորդ կնոջից զավակներ ունի, պետք է թողնել երկրորդ կնոջ կամքին, որը եթե կամենա՝ զավակներին կարող է պահել իրեն, եթե ոչ՝ պիտի հանձնի ամուսնուն, որը պարտավոր է ընդունել, սնուցել ու մեծացնել նույն զավակներին՝ իբրև իր ապօրինի զավակների» (էջ 159): «Որոգայթ փառաց»-ը պաշտպանության տակ է առնում կնոջ ամենատարբեր, նույնիսկ անմշան թվացող իրավունքները: Այսպես, օրինակ, նույնիսկ այն դեպքում, երբ ամուսինը բանտարկված է, կինը «ազատ կերպով կարող է մտնել ու բանտում լինել, դուրս գալ կամ մնալ իր ամուսնու հետ, եթե ինքը կամենա» (էջ 198): «Որոգայթ փառաց»-ը, ամրագրելով տղամարդու և կնոջ հավասարությունը, միաժամանակ կարևորում է կնոջ շահերի պաշտպանության անհրաժեշտությունը: Կինը պետք է լինի պաշտպանված, ազատ և չունենա գույքային անհավասարություն տղամարդու համեմատությամբ: Նույնիսկ այն դեպքում, երբ ամուսնացած տղամարդը գտնվում է զինվորական ծառայության մեջ, ապա «իբր ոռճիկի կեսը պետք է հանձնի իր կնոջը» (էջ 161): Ի տարբերություն շատ այլ ժողովուրդների, որոնք չունեն այլ ազգի կանանց պաշտպանության տակ առնելու սովորություն, հայոց սահմանադրությունը հանդես է բերում հումանիստական մոտեցում, երբ խոսքը վերաբերում է կնոջը: Հայոց ազգը, ըստ Շ. Շահամիրյանի, սիրո և պատվի է արժանանում նույնիսկ մեր թշնամիներից, քանի որ անգամ պատերազմի ժամանակ մարդասիրական վերաբերմունք է ցուցաբերում կանանց նկատմամբ: Դա ամրագրված է նաև սահմանադրության մեջ, ըստ որի՝ պատերազմի ժամանակ «անհրաժեշտ է պաշտպանության տակ առնել թշնամիների կանանց և դուստրերին, մի բան, որ անչափ ծանր է գալիս բարբարոսների սովորությանը» (էջ 168): Նույն ոգով սահմանվում է, որ «մարդկային բնությամբ իզական սեռին պատկանող ո՛չ քրիստոնյան, և ո՛չ հեթանոսը երբեք գեղի չեն վերցվելու, և ամեն ժամանակ, լինի պատերազմի թե խաղաղության ժամանակ, մարդկային բնությամբ իզական սեռին պատկանող ամեն [անձ] ազատ պետք է

լինի, բացի այն դեպքից, երբ նրա ձեռքերը մեղսագործություն են կատարել» (էջ 169): Ավելին, հայոց առաջին սահմանադրությունը պատիժ է սահմանում այն զինվորներին ու պաշտոնյաներին, որոնք ազատ կամ պատերազմի ժամանակ բռնությամբ կփորձեն տիրանալ թշնամու կնոջը կամ աղջկան (տե՛ս էջ 206): Այս դրույթն այսօր էլ խիստ արդիական է և կրկին փաստում է հայոց առաջին սահմանադրության հումանիստական բարձր ոգին:

Շ. Շահամիրյանը հասարակության մեջ կնոջ հասարակական կարգավիճակի ու հասարակական դիրքի սահմանադրական կարգավորումը դիտում է որպես հասարակության բարոյական մթնոլորտի և կայունության ապահովման խիստ կարևոր և անհրաժեշտ նախապայման: Որպես հասարակության լիիրավ անդամ՝ կինը պետք է պաշտպանված լինի բռնարարքներից, կոպիտ ուժից և անհարգալից վերաբերմունքի դրսևորումներից: Հրեղ-կահայ լուսավորիչները հասկանում էին, որ ասիական ժողովուրդների մեջ կնոջ նկատմամբ ավանդաբար ձևավորվել է ոչ հարգալից վերաբերմունք: Կինը գտնվել է կախվածության և սահմանափակ իրավունքների շրջանակներում: Դեռևս Հովսեփ Էմինը, մերժելով կնոջ նկատմամբ ունեցած հարաբերություններում ասիական ոչ քաղաքակիրթ սովորույթները, գրում էր, որ «Գեղեցիկ սեռի հանդեպ ասիացիների վերաբերմունքը ուրիշ ոչ մի բանի հետ չի կարելի համեմատել, քան միայն դիվային վերաբերմունքի»<sup>5</sup>: «Որոգայթ փառաց»-ում ևս կարևորվում է ասիական կոպիտ սովորույթներից հրաժարվելու անհրաժեշտությունը: Այս տեսակետից Շ. Շահամիրյանը որպես ասիական հետադիմական ավանդույթներից հրաժարվելու լուրջ քայլ ամրագրում է առերևույթ աննշան թվացող, բայց իրականում շատ կարևոր նորմ. «Բոլոր կանայք ու աղջիկները կարող են ազատորեն շրջել գլխաբաց և երեսբաց, բայց Տեր Աստծու տանը պետք է լինեն քողածածկ» (էջ 143): Կինը պետք է ունենա տղամարդու հետ հավասար ազատություններ և իրավունքներ, նրա նկատմամբ ցուցաբերվող բռնարարքները պետք է բացառվեն: Ավելին, նման արարք թույլ տվող անձնավորությունը պետք է պատրժվի օրենքի ողջ խստությամբ: Միայն օրենքը կարող է երաշխիք ծառայել առաջադիմական հարաբերությունների հաստատման համար: Արևելքի ժողովուրդներին հատուկ սովորույթներից հրաժարվելու անհրաժեշտությունը հիմնավորելու համար նա բերում է հին հռոմեացիների օրինակը: «Քանի դեռ ... հռոմեացիները կախում ունեին օրենքից, - գրում է Շահամիրյանը, - ոչ ոք չէր համարձակվում խոժոռ դեմքով նայել կնոջ երեսին, ուր մնաց թե հակառակվել, ընդդիմանալ, մեղություն տալ նրան և այլն: Բան է, եթե գտնվեր մեկը, որ բարկությամբ դիմեր որևէ կնոջ, ապա նրան ըստ օրենքի կպատժեին» (էջ 48-49): Մինչդեռ երբ օրենքներին փոխարինեց միահեծան իշխանությունը, այսինքն՝ կայսրությունը, «մինչև իսկ Հռոմում կայսեր (նկատի ունի Ներոնին - Գ.Ս) մոր որովայնը հերձվեց, և որ դրա համար ամբաստանող չգտնվեց» (էջ 48): Սակայն, ինչպես շատ այլ, այնպես էլ կնոջ հարցում, Շահամիրյանը ցուցաբերում է հակասական մոտեցում: Թվում էր, թե առաջադիմական լուսավորական գաղափարների ջատագով գործիչը պետք է սկզբունքորեն մերժեր ընդհանրապես կնոջ նկատմամբ արևելքում ավանդաբար շարունակվող խտրական վերաբերմունքի բոլոր դրսևորումները:

<sup>5</sup> Հ. Էմին, Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները, Բեյրութ, 1957, էջ 27:

Մինչդեռ սահմանադրության մեջ նկատվում են այդ նույն խտրական վերաբերմունքի մի շարք արտահայտություններ: Օրինակ, նրանում կարողում ենք, որ «Ոչ ոք իրավունք չունի հարվածել կանանց, բացի իշխաններից՝ նրանց ձեռքի ու արարքների համար, համաձայն դատաստանի վճռի, նաև ամուսնացած կնոջ մարդը՝ փափկամիս տեղին, մինչև տասներկու մտրակի հարված, բայց զգուշությամբ, որպեսզի չվիրավորի կամ չջարդի իր կնոջ ոսկորները» (էջ 187): Կամ՝ «եթե լինի բնավորությամբ գոռոզ որևէ աղջիկ, որին հարկ լինի սաստել գանահարությամբ, ապա նրա ուսուցիչը կարող է կանանց ձեռքով մինչև մտրակի ինը հարված ծեծ տալ նրան՝ ըստ մեղքի ծանրության և ըստ մեղավորի մարմնի դիմացկունության, զգուշ լինելով, որ չխեղձի հատկապես նրա տեսքը, չփշրվեն ոսկորները և անփարատելի երկյուղ չմտնի նրա սիրտը, որ նա զրկվի ծննդաբերելուց» (էջ 187): Կնոջ իրավունքների սահմանափակման մասին է խոսում նաև այն, որ, օրինակ, կինը չի կարող լինել ոչ մի բանի համար երաշխավոր (էջ 146): Նկատելի է, որ Շ. Շահամիրյանը, մի կողմից հանդես է գալիս որպես առաջադիմական ու ազատական գաղափարների համոզված պաշտպան, իսկ մյուս կողմից նրա մեջ դեռևս ուժեղ է ֆեոդալական դասային մտածողությունը և հեշտությամբ չի կարողանում հաղթահարել գիտակցության մեջ ավանդաբար գերիշխող կարծրատիպերը: Չնայած այս կարգի պահպանողական և ավանդապատական պատկերացումներին, հնդկահայ լուսավորիչները հայոց ազգի բարգավաճման, երջանիկ ու առաքինի ապրելակերպի ապահովման, ինչպես նաև կրթված ու քաջարի սերունդ դաստիարակելու գործում կարևոր տեղ էին հատկացնում հայ կնոջը: Բացի այն, որ նրանք հորդորում էին արական և իգական սեռի բոլոր ներկայացուցիչներին «հմտանալ տառն ու բառն ընթերցելու արվեստին և խոսել հայ լեզվով» (էջ 68), միաժամանակ խորհուրդ էին տալիս հայ տիկիններին հաճեցնել իրենց և իրենց ղուստերի սրտերը՝ ամուսնացնելով իրենց աղջիկներին քաջ մարդկանց և հաղթող զինվորների հետ» (էջ 68): Հայ կնոջ ամենակարևոր ու հիմնական առաքելություններից մեկը հնդկահայ լուսավորիչները համարում էին ընտանիքի և ազգի միասնության ու ամրապնդման գործում նրա ունեցած և ապագայում ևս ունենալիք դերը: «Ամոթանքի դատապարտեցեք ձեր ամուսիններին, եթե նրանք աշխատանքի ու ծառայության անցնեն օտար ազգերի մոտ», - գրում է Շ. Շահամիրյանը (էջ 68): Ինչպես նկատելի է, ազգային ոգու բարձրացման, նոր հասարակական կեցության հաստատման, ազգային միասնության ու համախմբվածության ապահովման համար պայմանների ստեղծման գործում հնդկահայ լուսավորիչները առանձնապես կարևորում էին կնոջ դերը: Ընդամենը, հնդկահայ լուսավորիչները այնքան առաջ են գնում իրենց պատկերացումներում, որ չեն բացառում նաև կնոջ մասնակցությունը պետության կառավարման գործերում: «Եթե այնպես պատահի, որ Հայաստանյայց նախարարությունը լինի ժառանգական, ապա պետք է որդեցորդի լինի՝ ըստ մարդու ծննդաբերության կարգի, լինի արու թե էգ» (էջ 94):

Շ. Շահամիրյանը կնոջը դիտում է որպես ազգի զենետիկական շարունակականությունն ապահովող, ազգին զավակներ պարզևոր մայր, ուստի և պետք է գտնվի համընդհանուր հոգածության միջավայրում: Բնությամբ յուրաքանչյուր տղամարդ պետք է պատվի ու փառավորի բնությամբ կին մարդուն և օժանդակի նրա արդարությանը (տե՛ս էջ 143): «Ոչ մի ծառայող,-

գրում է Շահամիրյանը,- ինչ իշխանի և իշխանության հրամանով էլ լինի և ինչ պարտականություն էլ կատարելիս լինի, չպետք է մտնի կանանց սենյակը, հատկապես ամուսնացած կանանց, որովհետև ... ոչ մի աղմուկ, դրդում և հոգս չենք ցանկանում մեզ ծնող կանանց և մեզ համար ապագայում որդի ծնող մայրերին...» (էջ 182): Նույն միտքն էր պաշտպանում նաև Մ. Բաղրամյանը՝ նշելով, որ կինը՝ լինելով սերունդի շարունակությունն ապահովողը, այդ ճանապարհին մեծ գրկանքներ ու դժվարություններ է ունենում: Ուստի և ոչ մեկը, հատկապես զավակները, չպետք է տրտմություն պատճառի նրան: Կին մայրը պետք է լինի հոգածությանը շրջապատված հատկապես զավակների կողմից, իսկ ծերության հասակում՝ ուշադրության կենտրոնում: Կնոջ առաքելություններից մեկը երեխաների ծննդից ու չափահաս դարձնելուց հետո նրանց սնելն է, կրթելն ու դաստիարակելը: Բաղրամյանը կրթության ու դաստիարակության մեջ մերժում է խստությունն ու բռնությունը: Քանի որ բնավորությամբ բոլորը նույնը չեն, ուստի ամեն ոք պետք է ընտրի ըստ իր կամքի, ուսանի այն, ինչ ցանկանում է\*:

Կանայք, ըստ հայոց առաջին սահմանադրության, նույնիսկ ազատվում են հարկի որոշ տեսակներից (տե՛ս էջ 197): Նման մոտեցումն ինքնին խոսում է այն մասին, որ հնդկահայ լուսավորիչները, տոգորված լինելով եվրոպական լուսավորական առաջադեմ գաղափարներով, առաջ են քաշում կնոջ պաշտպանվածության, ազատության ու իրավունքների գաղափարներ: Սահմանադրությունը պատիժ է սահմանում կնոջ արժանապատվությունը ոտնահարողների նկատմամբ (տե՛ս էջ 201), ավելին՝ մահվան դատավճիռ է սահմանում ամուսնացած կնոջը կամ կույս աղջկան բռնությամբ խայտառակողների համար (տե՛ս էջ 202): Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ հայոց առաջին սահմանադրությունը կնոջը դիտում է որպես ժառանգական հարաբերությունների սուբյեկտ (չնայած նկատվում է տղա ժառանգի առավելությունը աղջիկ ժառանգի նկատմամբ): Գույքային հարաբերությունների կարգավորման ժամանակ ևս հիմք էր ընդունվում երկու սեռերի լիակատար հավասարությունը և հոգատարությունն ու հոգածությունը կնոջ շահերի պաշտպանության նկատմամբ: Դա վերաբերում է նաև ամուսնությանը, կնոջ և տղամարդու միջև պայմանագրային պարտականությունների կատարմանը, որտեղ փաստվում է կնոջը որպես առաջին ժառանգորդ ճանաչելու հանգամանքը (տե՛ս էջ 117): Այս դրույթը ավելի է կոնկրետացվում հետագա գլուխներում՝ պարզաբանելով, որ ամուսնու մահվանից հետո ունեցվածքի կեսը պետք է տրվի կնոջը, եթե զավակ չունեն, իսկ եթե ունեն, ապա մեկ բաժինը տրվում է կնոջը, որդուն՝ 2 բաժին և դստերը՝ 1 բաժին, «որովհետև որդին երկու է համարվում, իսկ դուստրը՝ մեկ» (էջ 134):

Պետք է փաստել, որ, ճիշտ է, դեռևս ոչ համակարգված ու նպատակալից ձևով, բայց և այնպես, հնդկահայ լուսավորիչներն առաջիններից էին, որ անդրադարձան կնոջ, ընտանիքի, ամուսնաընտանեկան հարաբերությունների ու դրանց սահմանադրական կարգավորման հարցերին, առաջադրեցին մի շարք արժեքավոր գաղափարներ: Նրանք առաջիններից էին նաև, որ տեսան միջնադարյան կապանքներից կնոջ ազատագրման

\* Տե՛ս Մ. Բաղրամյան, Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ, Եր., 1991, էջ 141:

անհրաժեշտությունը: Պակաս արժեքավոր չեն նաև նրանց այն գաղափարները, որոնք վերաբերում են ազգային ազատագրական պայքարի համար երիտասարդության նպատակամղված կրթության ու դաստիարակության մեջ կնոջ պատկանելիք դերին: Բայց, եթե հայոց առաջին սահմանադրությունը նախատեսում էր կնոջ հնարավորինս լայն ազատություններ ու իրավունքներ տնտեսական, սոցիալական, կենցաղային, կրթական, ամուսնաընտանեկան ոլորտներում, ապա քաղաքական ազատությունների հարցում դեռևս չէր ապահովվում իրավահավասարություն: Պետական պաշտոններում ընտրվելու իրավունքը վերապահվում էր ծնունդով հայաստանցի, հայ առաքելական եկեղեցուն դավանող բացառապես արական սեռի ներկայացուցիչներին (տե՛ս էջ 78): Կինը նաև չէր կարող երաշխավոր լինել ոչ մի բանի համար (տե՛ս էջ 146), ինչպես նաև՝ «Ամուսնացած կնոջ կողմից ուրիշին տրված փաստաթուղթն արժանահավատությունից զուրկ է» (էջ 145): Սակայն, համեմատության համար նշենք, որ 18-րդ դարում եվրոպական և ամերիկյան սահմանադրությունները ևս այս հարցում կատարյալ չէին: Այսպես, 1787 թ. ամերիկյան սահմանադրությամբ կանայք զրկված էին ոչ միայն ընտրվելու, այլև ընտրելու իրավունքից: Այդ սահմանափակումը վերացվեց միայն 1920 թ., երբ ընդունվեց 19-րդ ուղղումը, ըստ որի սահմանվում է, որ «Միացյալ Նահանգների քաղաքացիների ընտրություններին մասնակցելու իրավունքը՝ նրանց սեռի հետ կապված, չպետք է մերժվի կամ սահմանափակվի Միացյալ Նահանգների, ինչպես նաև առանձին նահանգների կողմից»<sup>7</sup>: Ավելին՝ 1789 թ. ֆրանսիական բուրժուական հեղափոխությունից հետո ընդունված Մարդու իրավունքների հռչակագիրը կանանց չի վերապահում ընտրելու իրավունք: Թեև այդ նույն ժամանակ Ֆրանսիայում կանանց իրավունքների համար մարտնչող Օլեմպիա դե Գուժը՝ ի հակադիր Մարդու իրավունքների հռչակագրի, Ազգային ժողովի քննարկման ներկայացրեց կնոջ և քաղաքացուի իրավունքների հռչակագիր, համաձայն որի բոլոր քաղաքացուիները տղամարդկանց մման պետք է անձամբ կամ իրենց կողմից ընտրված քաղաքացիների միջոցով մասնակցեին կառավարմանը, բայց և այնպես նույնիսկ Ֆրանսիայի մման սահմանադրական և ժողովրդավարական հարուստ ավանդույթներ ունեցող երկրում կանայք ընտրական իրավունք ստացան միայն ավելի քան մեկուկես դար հետո՝ 1946 թ., իսկ ձեռնարկչատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք՝ 1972 թ.: Ավելորդ չէ հիշեցնել նաև, որ ընտրելու իրավունք կանայք աշխարհում առաջինը ստացել են Նոր Զելանդիայում (1893 թ.), իսկ ընդհանրապես կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը սահմանադրորեն առաջին անգամ ամրագրվել է Ֆինլանդիայում՝ 1906 թ.: Այս համատեքստում, կարծում ենք, հատկանշական է, որ Հայաստանի առաջին Հանրապետությունը ևս հետ չմնաց այդ գործընթացներից, որը նոր ձևավորվող պետականության պայմաններում առաջին դեկրետներից մեկով (1918 թ.) սահմանեց կանանց ընտրելու և ընտրվելու իրավունքը<sup>8</sup>: Գիտական ու քաղաքացիական արդարամտությունը պահանջում է ասել նաև, որ թեև

<sup>7</sup> Հ. Խաչատրյան, ԱՄՆ-ի սահմանադրությունը, Եր., 1991, էջ 130:

<sup>8</sup> Տե՛ս Հ. Հակոբյան, Կանայք Հայաստանի քաղաքական կյանքում, Բե՛Հ, 2004, թիվ 3, էջ 206:

տասնամյակներ շարունակ միջազգային իրավական բազմաթիվ փաստաթղթերում (1945 թ., ՄԱԿ-ի կանոնադրություն) և հռչակագրերում (1948 թ., Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր) պետություններից պահանջվում է համապատասխան պայմաններ ստեղծել կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը գործնականում ապահովելու համար, սակայն ցավով պետք է նշել, որ այդ ուղղությամբ դեռ շատ անելիքներ կան մակ, որքան էլ զարմանալի է, հենց նորանկախ Հայաստանի Հանրապետությունում: Ասվածը մեկ անգամ ևս վկայում է, որ ինչպես շատ հարցեր, այնպես էլ կնոջ և տղամարդու իրավահավասարության սկզբունքի հռչակումը դեռևս երաշխիք չէ բոլոր ժողովուրդների կողմից դրա իրականացման համար: Դրա ապացույցն այն է, որ չնայած հռչակագրերի ու օրենքների բավարար գոյությանը՝ դեռևս պահպանվում է կնոջ նկատմամբ խտրականությունը: Դրա խորքային պատճառները պետք է փնտրել այս կամ այն ժողովրդի պատմության, մշակույթի, սովորույթների, ավանդույթների, դարերով մշակված ու արմատավորված արժեհամակարգի մեջ: Պակաս կարևոր դեր չեն խաղում մակ հասարակության պատմական փորձը, մշակույթի զարգացման մակարդակը, բարոյահոգեբանական չափանիշները<sup>9</sup>: Այդուհանդերձ, ինչպես տեսնում ենք, հայոց առաջին սահմանադրությունն իր մեջ ներառում է հստակ սկզբունքներ, իրավական մեթոդաբանություն և հենվում է հստակ գաղափարական կողմնորոշումների վրա, որի պատճառով էլ այն ունի ոչ միայն պատմական, այլև գաղափարական մեծ արժեք և չի կորցրել հետաքրքրությունը մակ մեր օրերում: Որպես առաջին սահմանադրություն՝ «Որոգայթ փառաց»-ն անպայմանորեն իր վրա կրում էր ազգի պատմական, տարածքային, տնտեսական, մշակութային, հոգեբանական, կրոնական, բարոյական, ազգային արժեհամակարգի և այլ առանձնահատկությունների կնիքը: Դա առաջին հերթին վերաբերում է հասարակական կյանքի այնպիսի պահպանողական ոլորտին, ինչպիսին ամուսնաընտանեկան հարաբերություններն են, որտեղ մեծ է դարերով հաստատված ավանդույթի ուժը:

Այսպիսով, «Որոգայթ փառաց»-ում կարևոր տեղ է հատկացվում կնոջ սահմանադրական իրավունքներին և ազատություններին: Այն գաղափարը, որ հայ կնոջ վիճակը և սոցիալական դիրքը ամբողջովին չեն համապատասխանում քաղաքակրթության զարգացման պահանջներին, լրացվում է նրանով, որ եթե հայ ազգը ձգտում է տեղ գտնել քաղաքակրթ ազգերի ընտանիքում, ամրապնդել պետականությունն ու կառուցել նոր տիպի հասարակություն, ապա պետք է վերափոխի իր մոտեցումը և որդեգրի նոր քաղաքականություն մակ կնոջ հարցում: Այն է՝ հասարակության մեջ նրա գոյության ու զարգացման համար տնտեսական, կրթական, իրավական, բարոյական, ամուսնաընտանեկան նոր պայմանների ստեղծումը պետք է լինի այդ նույն հասարակության առաջնահերթ խնդիրներից մեկը: Ավելին, «Որոգայթ փառաց»-ը ոչ միայն տեսականորեն հիմնավորում, այլև ժամանակի

<sup>9</sup> Տե՛ս Վ. Այվազյան, Մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպումը, Եր., 2000, էջ 57, **Л. Н. Завадская**, Равенство полов: международные акты и национальная политика. В кн.: «Социальное государство и защита прав человека». М., 1994, էջ 120:



իրավաքաղաքական մտքի զարգացմանը համապատասխան՝ երաշխավորում է դրանց իրականացումը՝ դարձնելով հայոց առաջին սահմանադրության առանցքային նորմերից մեկը: Միաժամանակ, ինչպես տեսանք, հանդիսանալով նոր, առաջադիմական գաղափարների, ազատ մտքի թռիչքի արտահայտություն, սահմանելով կնոջ համար լայն իրավունքներ և ազատություններ, դրա հետ միասին հայոց առաջին սահմանադրությունն իր վրա կրում է ժամանակի մտածողությանը բնորոշ ավանդապաշտական սահմանափակումների կնիքը: Այս բոլորով հանդերձ՝ «Ռրոգայթ փառաց»-ը կնոջ ազատության և հասարակական դերի սահմանման բնագավառում մի լուրջ և կարևոր հանգրվան է, որի շատ գաղափարներ այսօր էլ ունեն այժմեական հնչեղություն:

**Г. А. МЕЛКУМЯН — *Вопросы свободы и общественной роли женщины в книге “Западня честолобия” (“Ворогайт Парац”).*** — В рамках проблем прав человека в мировоззрении индо-армянских просветителей 18 века логической составляющей являются представления о положении женщины в обществе, о ее правах и обязанностях. Они нашли свое отражение в первой армянской конституции — в книге “Западня честолобия”, где определяются и конституционно регулируются свобода, права и обязанности женщин.

Констатируя тот факт, что состояние и социальное положение армянских женщин не соответствует требованиям развития цивилизованного общества, “Западня честолобия” видит необходимость новой политики в отношении женщин. В этом смысле одной из первоочередных задач общества является создание экономических, образовательных, юридических, моральных, семейных и иных благоприятных условий для существования и развития женщин.

Многие положения первой армянской конституции и сегодня имеют актуальное значение.